ԾՐԱԳԻՐ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N	Գործողություններ	Նպատակ–խնդիր	Գործողության վերջնա ժամկետ	Պատասխանատու մարմին /համակատարող/	Օբյեկտիվ վերստուգելի չափանիշ	Ֆինանսավորման աղբյուր
1	2	3	4	5	6	7
		I. ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ				
1.	1.1. Մշակել պրոբացիայի ծառայության գործունեությունը կարգավորող իրավական ակտի նախագիծ 1.2. Մշակել պրոբացիայի ծառայության աշխատակիցների շարունակական մասնագիտական ուսուցման համակարգ	ՀՀ արդարադատության նախարարության կառուցվածքում ստեղծել քրեակատարողական ծառայությունից անկախ և առանձին պրոբացիայի ծառայություն	2014թ. մարտ	ՀՀ արդարադատության նախարարություն		
2.	2.1. Ուսումնասիրել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշում կայացնող մարմինների համակարգը պարզեցնելու և յուրաքանչյուր մարմնի գործառույթները հստակեցնելու հնարավորությունները 2.2. Սահմանել այն օբյեկտիվ չափանիշները, որոնց հիման վրա համապատասխան մարմինները պետք է որոշեն դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը 2.3. Սահմանել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ դատական գործերի	Բարեփոխել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ընթացակարգը	2014թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն		

	քննության արդյունավետ կարգ					
3.	3.1. Վերանայել ներկայումս բժշկական փորձաքննություն իրականացնող մարմնի լիազորությունները և սահմանել վերջինիս գործունեության իրավական ընթացակարգերը 3.2. Սահմանել ազատազրկման ձևով պատիժը կրող դատապարտյալին ծանր հիվանդության հիմքով պատժից ազատման վերաբերյալ դատական գործերի քննության արդյունավետ կարգ	Բարեփոխել ազատազրկման ձևով պատիժը կրող դատապարտյալին ծանր հիվանդության հիմքով պատժից ազատելու կարգը	2013թ. նոյեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն		
4.	4.1. Մշակել դիտարկումների արդյունավետ համակարգ՝ բացառելու համար ՁՊՎ-ներում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի պահանջների խախտումները և հանցանք կատարելու մեջ կասկածվող անձանց ոստիկանության բաժին բերման ենթարկելուց հետո ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131.1 հոդվածի պահանջների խախտմամբ (3 ժամից ավել առանց կարգավիճակ տալու) պահելու դեպքերը վերացնելու ուղղությամբ	Օրենսդրական փոփոխությունների ընդունում՝ ուղղված ոստիկանության գործունեության բարելավմանը	2013թ. ընթացքում	ՀՀ ոստիկանություն		
5.	5.1. Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կարողությունների՝ անհրաժեշտ մարդկային և ֆինանսական միջոցների ավելացում, որը հնարավորություն կտա պաշտպանին ավելացնելու իր	Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կարողությունների հզորացում՝ ուղղված ազգային կանխարգելման կառուցակարգի լիարժեք	2013թ. երրորդ եռամսյակ	ՀՀ ֆինանսների նախարարություն, ՄԻՊ-ը համաձայնությամբ		

	մշտադիտարկումները և ընդլայնելու աշխատանքը դեպի շրջաններ, հնարավորություն կտա առավել արդյունավետ իրականացնել ազգային կանխարգելման մեխանիզմի առաքելությունը, կամրապնդի կալանավորված անձանց վատ վերաբերմունքից զերծ պահելու երաշխիքները	իրականացման, կալանավորված անձանց վատ վերաբերմունքից զերծ պահելու նպատակներին. քննարկել օրենսդրական փոփոխությունների նպատակահարմարությունը				
6.	6.1. Մշակել արդյունավետ դիտարկումների համակարգ ՀՀ ոստիկանության ԱՎՎ-ում և տարածքային բաժիններում՝ քաղաքացուն մտահոգող խնդիրները վերհանելու, ինչպես նաև անձնագիր ստանալու հետ կապված անհիմն մերժումները հնարավորինս վերացնելու ուղղությամբ	Օրենսդրական փոփոխությունների ընդունում՝ ուղղված ոստիկանության գործունեության բարելավմանը	2013թ. ընթացքում	ՀՀ ոստիկանություն		
7.	7.1. Բարելավել հսկողությունը՝ հանցագործության մասին հաղորդումներին քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված կարգով ընթացք չտալու և ՀՀ գլխավոր դատախազի և Ներքին գործերի նախարարի 1999թ. թիվ 12/34 համատեղ (իրավական ուժը կորցրած) հրամանով ղեկավարվելու պրակտիկան բացառելու ուղղությամբ	Օրենսդրական փոփոխությունների ընդունում՝ ուղղված ոստիկանության գործունեության բարելավմանը	2013թ. ընթացքում	ՀՀ ոստիկանություն. ՀՀ դատախազություն		
II. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ						
8.	8.1. «Առողջապահության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ Կառավարություն	«Առողջապահության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունում	2013թ. չորրորդ եռամսյակ	ՀՀ առողջապահության նախարարություն		

9.	9.1. Ձեռնարկել բավարար միջոցներ առողջության առաջնային պահպանման ոլորտի զարգացման ուղղությամբ 9.2. Զարգացնել հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման, ախտորոշման և բուժման, առողջ ապրելակերպ սերմանող առողջապահության գործող համակարգը ու նպաստել հանրային առողջությունն ապահովող միջավայրի ձևավորմանը 9.3. Մշակել պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի ընդլայնման ուղղությամբ առաջարկություններ և համապատասխան հայեցակարգի նախագիծ	ՀՀ քաղաքացիների առողջապահական իրավունքների իրացմանը և պաշտպանությանն առնչվող մեկ ընդհանուր իավական ակտի ընդունման անհրաժեշտության վերհանում	2013թ. չորրորդ եռամսյակ	ՀՀ առողջապահության նախարարություն		
10.	10.1. Հիվանդների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ, որոնք թույլ կտան հիվանդներին տեղեկանալ իրենց իրավունքների և պարտականությունների մասին և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն առողջապահական հաստատություններում	Իրազեկվածության բարձրացում	Պարբերաբար	ՀՀ առողջապահության նախարարություն		
11.	11.1. Անհրաժեշտ միջոցների ձեռնարկում՝ վարակիչ հիվանդությունների վաղ ախտորոշման, մոնիտորինգի և հիվանդության տարածման կանխարգելմանն ուղղված	Վարակիչ հիվանդությունների ախտորոշման, մոնիտորինգի և վերահսկման հնարավորությունների մեծացում	2014թ. երրորդ եռամսյակ	ՀՀ առողջապահության նախարարություն		

	վերահսկողության միջոցների զարգացման համար					
12.	12.1. Վերարտադրողական առողջության և իրավունքների պաշտպանություն, ինչպես նաև գենդերային բռնության զոհերի ուղղորդման՝ ծառայություն ստանալու և բժիշկների «պարտավորությունը» հայտնել այլ ատյաններ կատարված բռնության մասին	«Վերարտադրողական առողջության և մարդու վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ	2013թ. վերջիո եռամսյակ	ՀՀ առողջապահության նախարարություն		
13.	13.1. Ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ ուղղված հոգեբուժական բժշկական հաստատություններում մարդու առողջապահական իրավունքների իրացման հետ կապված գործողությունների նկատմամբ վերահսկողության բարելավմանն ու խստացմանը	Առողջապահության ոլորտում վերահսկողության մեխանիզմի ուժեղացում	2013թ. չորրորդ եռամսյակ	ՀՀ առողջապահության նախարարություն		
14.	14.1. Աշխատանքի անվտանգության և աշխատավայրերում աշխատողների առողջության պահպանման ազգային ծրագրի մշակում	Աշխատանքի անվտանգության ու առողջության պահպանման ազգային ծրագրի ընդունում	2016թ. առաջին եռամսյակ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		ՀՀ պետական բյուջե դոնոր կազմակերպություններ
15.	15.1. Սահմանել առողջապահության ոլորտում համավճարի մեխանիզմի կիրառման ընթացքում համապատասխան հանձնաժողովների կողմից	Օրենսդրական ակտերի նախագծում	2013թ. չորրորդ եռամսյակ	ՀՀ առողջապահությանն ախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական		

	համավճարը զեղչելու կամ դրանից ազատելու հիմքեր, չափորոշիչներ			հարցերի նախարարություն		
III. ՄՏՔԻ, ԽՂՃԻ, ԿՐՈՆԻ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ						
16.	16.1. Կրոնի կամ խղճի հիմքերով խտրականության դրսևորումները կանխելու նպատակով անհրաժեշտ իրավական և վարչական միջոցների ձեռնարկում 16.2. Կրոնի և հավատքի ազատության իրավունքի խախտման դեպքերում զոհերի պաշտպանությանն ուղղված արդյունավետ իրավական լուծումների ապահովում	Օրենսդրական բարեփոխումներ՝ կրոնի կամ խղճի հիմքերով խտրականության դեմ պայքարի ոլորտում	2014թ. չորրորդ եռամսյակ	ՀՀ կառավարության աշխատակազմի Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչություն, ՀՀ արդարադատության նախարարություն		
17.	17.1. Համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել կրոնի և հավատքի վերաբերյալ դպրոցական ուսուցման ծրագրերում՝ ուսումնասիրելով և վերլուծելով Կրոնների և հավատքների դպրոցական ուսուցման Տոլեդոյի ուղղորդող սկզբունքները	Կրոնի և հավատքի վերաբերյալ դպրոցական ուսուցման ծրագրերի կատարելագործում՝ ուղղված անընդունելի հոգեորսությունից խոցելի խմբերի և առաջին հերթին՝ երեխաների և երիտասարդների պաշտպանվածության ապահովումը	2013թ. երրորդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն		
18.	18.1. «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագծի մշակումը՝ գործող օրենքը միջազգային ստանդարտներին և ՄԱԿ-ի տարբեր գործակալությունների և Եվրոպայի խորհրդի առաջարկներին համապատասխանեցնելու համար	Այլընտրանքային ծառայությանն առնչվող օրենսդրական ակտերի համապատասխանեցում միջազգային չափորոշիչներին	2014թ. առաջին եռամսյակ	ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն		

IV. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ						
19.	19.1. Ձեռնարկել միջոցներ թափանցիկ դարձնելու համար դպրոցների կառավարման խորհուրդների գործունեությունը՝ հատկապես դպրոցի տնօրենների ընտրությունների ժամանակ, 19.2. Վերանայել աշակերտների թվաքանակով դպրոցներին հատկացվող ֆինանսավորման կարգ. քիչ թվով աշակերտներ ունեցող դպրոցները հատկացված գումարներով հնարավորություն ունենան բարելավել նվազագույն հիգիենիկ պայմանները, ձեռք բերեն անհրաժեշտ գույք, ժամանակակից լաբորատոր սարքավորումներ, ունենան համակարգչային դասարան և այլն	Պետության տարածքում որակյալ կրթության ապահովում	2014թ. առաջին եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն		
20.	20.1. Ձեռնարկել միջոցներ քաղաքային և գյուղական հանրակրթական ուսումնական հաստատությունների համաչափ զարգացման ուղղությամբ	Քաղաքային և գյուղական հանրակրթական ուսումնական հաստատությունների համաչափ զարգացում	2013թ. երրորդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն		
21.	21.1. Զինծառայության ընթացքում մարդու իրավունքների խախտումների կանխարգելման, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում	Նախազորակոչային տարիքի դպրոցականների շրջանում զինծառայության, զինծառայողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ընդհանուր իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ միջոցառումների	2013թ. երկրորդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ		

		իրականացում, այդ թվում՝ ըստ անհրաժեշտության ՆԶՊ առարկայի շրջանակում զինծառայողների իրավունքների և պարտականությունների, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ թեմաների և դասավանդման մեթոդիկայի վերանայում, ինչպես նաև «Մարդու իրավունքները» առարկայի վերականգնում՝ որպես առանձին առարկա հանրակրթական դպրոցի ծրագրում՝ դրանում նախատեսելով նաև միջազգային մարդասիրական իրավունքի ծավալուն բաժին (շաբաթական 2 ժամ այս առարկայի համար)		/համաձայնությամբ/		
22.	22.1. ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի լրացուցիչ արձանագրության վավերացման ընթացակարգերի ապահովում	Տվյալ միջազգային դաշնագրի շրջանակներում ստեղծված բողոքարկման մեխանիզմից յուրաքանչյուր անձի օգտվելու հնարավորության ստեղծում	2014թ. երրորդ եռամսյակ	ՀՀ ԱԳՆ, ՀՀ կրթության և գիտության նախարարություն		
23.	23.1. Քննարկել ՀՀ Նախագահի համապատասխան հրամանագրով սահմանված կարգում փոփոխություններ կատարելու հարցը	Մասնագիտական կրթության հասանելիությանն ու մատչելիությանն ուղղված անհրաժեշտ միջոցների	2013թ. երրորդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ		

	և հիմք ընդունելով փաստացի իրավիճակը՝ սահմանել պարտադիր զինվորական ծառայության զորակոչից մինչև ուսումնառության ավարտը տարկետում տալու վերաբերյալ կառավարության որոշումների նախագծերը միայն ՀՀ Նախագահի աշխատակազմ ներկայացնելու պահանջ	ձեռնարկումը		պաշտպանության նախարարություն		
V. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ						
24.	24.1. Աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման ազգային ծրագրի մշակում	«Աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման ազգային ծրագրի» ընդունում	2016թ.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		
25.	25.1. Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ աշխատանքային և սոցիալական ապահովության ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործման ուղղությամբ՝ առկա հակասությունները վերացնելու, կամայական մեկնաբանությունների տեղիք տվող օրենսդրական բացերը լրացնելու, աշխատանքային և սոցիալական իրավունքների ապահովման անհրաժեշտ երաշխիքները սահմանելու, ՀՀ կողմից վավերացված միջազգային	Օրենսդրական փոփոխություններ բժշկասոցիալական փորձաքննության կանխատեսելի, անաչառ համակարգի ստեղծման համար	2016թ.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն		

	պայմանագրերի պահանջներին դրա համապատասխանությունն ապահովելու նպատակով					
26.	26.1. Աշխատանքային վեճերի լուծման արդյունավետ մեխանիզմների մշակում և ներդրում	Աշխատանքային վեճերի լուծմանն առնչվող օրենսդրական ակտերում անհրաժեշտ փոփոխությունների նախագծում	2016թ. առաջին եռամսյակ	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		
27.	27.1. Ապահովել պատշաճ վերահսկողություն՝ նորմերի խախտումներով արտադրական վտանգավոր օբյեկտների շահագործման բացառման նպատակով 27.2. Ձեռնարկել միջոցներ՝ պատերազմի, բնական աղետների ու տեխնածին վթարների սպառնալիքի կամ առաջացման դեպքում բնակչության ազդարարման և իրազեկման գործընթացների բարելավման ուղղությամբ 27.3. Մշակել և ներդնել արտակարգ իրավիճակների հետևանքներով բնակչությանը պատճառված վնասի փոխհատուցման ապահովագրական համակարգ	Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտի բարեփոխումներ	2013թ. չորրորդ եռամսյակ 2014թ. առաջին եռամսյակ	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն		ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
28.	28.1. Մասնակցությունը Եվրամիության զբաղվածության քաղաքականության համակարգմանն ու Հայաստանի Հանրապետության զբաղվածության ապահովման ռազմավարության իրականացմանը	Եվրամիության զբաղվածության քաղաքականության ներդրում	2014թ. չորրորդ եռամսյակ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն		

VI. ԲԱՎԱՐԱՐ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔ						
29.	29.1. Հանրակրթական ուսումնական հաստատություններում սահմանել սանիտարական նորմեր, դրանց պահպանման կանոններ, իրականացման մեթոդական ուղեցույցներ	Պարտադիր սանիտարական նորմերի ամրագրում	2013թ. չորրորդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն		
30.	30.1. Բարելավել սննդամթերքի անվտանգության համակարգը, մասնավորապես՝ կատարելագործել օրենսդրական համապատասխան հիմքերը	Սննդամթերքի անվտանգությանն ուղղված օրենսդրական ակտերում փոփոխությունների նախագծում	2015թ. դեկտեմբեր	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն		
31.	31.1. Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ուժեղացնելու համար հսկողությունը ոչ պարենային ապրանքների մակնշման, օգտագործման և պահպանման պահանջների պահպանման նկատմամբ. 31.2. Ձեռնարկել միջոցառումներ սպառողների իրավունքների ապահովման և պաշտպանության, ինչպես նաև սպառողների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով	«Սպառողների իրավունքների մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենսդրական ակտերում համապատասխան փոփոխություններ	2013թ. երրորդ եռամսյակ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		
32.	32.1. Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի համապատասխանության ստուգման նպատակով՝ բարձրացնել վերահսկողության արդյունավետությունը	Վերահսկողության համակարգի զարգացում	2013թ. երրորդ եռամսյակ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		
33.	33.1. «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ հանրապետության ողջ տարածքում	Օրենքի դրույթների ի կատար ածմանն ուղղված միջոցառումների ապահովում	2014թ. առաջին եռամսյակ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն		

	մորթի սպանդանոցների ստեղծմանն ուղղված միջոցառումների նախատեսում 33.2. Սահմանել պատշաճ հսկողություն ՀՀ ներկրվող տարբեր տեսակի սերմացուների որակի նկատմամբ					
34.	34.1. Միջոցներ ձեռնարկել գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման ուղղությամբ	Տվյալ ոլորտում ապահովագրության մասին օրենսդրական փոփոխություններ՝ հիմնված տվյալ ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա	2014թ. առաջին եռամսյակ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ կենտրոնական բանկ /համաձայնությամբ/		
35.	35.1. Շարունակել խթանել գյուղատնտեսությունում գործունեություն իրականացնող տնտեսվարողներին մատչելի պայմաններով վարկեր տրամադրելու քաղաքականությունը	Տվյալ ոլորտում վարկային քաղաքականության մշակում	2014թ. երկրորդ եռամսյակ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		
36.	36.1. Մշակել արդյունավետ մոնիթորինգի համակարգ՝ կենսաթոշակների և նպաստների նշանակման, քաղաքացիների բժշկասոցիալական փորձաքննության կազմակերպման օրենսդրությամբ սահմանված պահանջների պատշաճ կատարումը վերահսկելու համար	Կենսաթոշակի և պետական նպաստների արդարացի չափի ապահովում	2013-2016թթ.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն		
37.	37.1. Կենսաթոշակների չափերի պարբերական բարձրացում՝ հաշվի առնելով առկա ռեսուրսները	Նախ նվազեցնել, ապա բացառել աղքատությունը կենսաթոշակառուների շրջանում՝ ապահովելով համակարգի ֆինանսական կայունությունը	շարունակա կան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն		

38.	38.1. Ուժեղացնել վերահսկողությունը քաղաքաշինական փաստաթղթերի՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանության ապահովման և համայնքների ղեկավարների՝ ինքնակամ շինարարության կանխման, կասեցման և հետևանքների վերացման պարտականության կատարման նկատմամբ	Քաղաքաշինության ոլորտի բարեփոխումներ	2013թ. չորրորդ եռամսյակ			
39.	39.1. Հետևողական քայլեր ձեռնարկել համայնքի տարածքում կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին բնակիչներին տեղեկացնելու, քննարկումներ կազմակերպելու գործընթացը պատշաճ ապահովելու ուղղությամբ	Իրազեկման ծրագրերի կատարում	2013թ.-ից շարունակական	ՀՀ քաղաքաշինության նախարարություն /համաձայնությամբ/		
40.	40.1. Ապահովել պատշաճ վերահսկողություն՝ քաղաքաշինական նորմերի խախտումներով շինարարական աշխատանքների կատարման և շինարարության սահմանված ժամկետների խախտումների բացառման նպատակով	Քաղաքաշինության ոլորտի օրենսդրական փոփոխությունների ընդունում	2014թ. առաջին եռամսյակ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն /համաձայնությամբ/		
41.	41.1. «Քաղաքաշինական գործունեության հսկողության և վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	«Քաղաքաշինական գործունեության հսկողության և վերահսկողության մասին» ՀՀ օրենքի ընդունում	2014թ. երկրորդ եռամսյակ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն /համաձայնությամբ/		
VII. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ						
42.	42.1. Պետական նպաստների	Պետական նպաստների	2014 թ.	ՀՀ աշխատանքի և		

	նշանակման ժամանակ դիմողի տվյալների և այլ նախարարությունների, գերատեսչությունների և կազմակերպությունների տեղեկատվական բազաներում առկա տվյալների համադրելիության բարձրացում, մոնիթորինգի և վերահսկողության մեխանիզմների հստակեցում, սոցիալ տնտեսական զարգացման միտումներին համահունչ պետական նպաստների չափերի բարձրացում	վարչարարության բարելավում, Պետական նպաստների չափերի բարձրացում	առաջին եռամսյակ	սոցիալական հարցերի նախարարություն		
43.	43.1. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին (ընտանիքին) սոցիալական ծառայությունների փաթեթի (համալիրի) տրամադրման ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ստեղծման համար անհրաժեշտ ուսումնասիրությունների, վերլուծությունների, նախագծերի մշակման աշխատանքների կատարում 43.2. Ձեռնարկել միջոցներ՝ պատերազմի, բնական աղետների ու տեխնածին վթարների սպառնալիքի կամ առաջացման դեպքում բնակչության ազդարարման և իրազեկման գործընթացների բարելավման ուղղությամբ 43.3. Մշակել և ներդնել արտակարգ իրավիճակների հետևանքով	Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտի բարեփոխումներ	2015թ. առաջին եռամսյակ 2013թ. չորրորդ եռամսյակ 2014թ. առաջին եռամսյակ	ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն		ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենսդրու-թյամբ չարգելված միջոցներ

	բնակչությանը պատճառված վնասի փոխհատուցման ապահովագրական համակարգ					
44.	44.1. Տնտեսական և սոցիալական իրավունքների պաշտպանվածությունը կարգավորող օրենսդրության համապատասխանեցումը միջազգային չափորոշիչներին	Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրության ստորագրում և վավերացում	2014թ առաջին եռամսյակ	ՀՀ ԱԳՆ		ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենսդրու-թյամբ չարգելված միջոցներ
VIII. ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀԱՐԳԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ						
45..	45.1. Մարդու իրավունքների պաշտպանին՝ տվյալների պաշտպանության իրավական դաշտը վերահսկելու իրավասություն շնորհելու հարցի քննարկման համար անհրաժեշտ ուսումնասիրությունների և վերլուծությունների կատարում, համապատասխան զեկույցի պատրաստում	Մարդու իրավունքների պաշտպանին՝ տվյալների պաշտպանության իրավական դաշտը վերահսկելու իրավասություն շնորհելու հնարավորության քննարկումը	2016թ. առաջին եռամսյակ			
46.	46.1. Անհատական տվյալների պաշտպանության ոլորտում առկա բացթողումների լրացում՝ Եվրոպական միության ընդունած չափանիշներին համապատասխան ներպետական օրենսդրության բարեփոխումների՝ անհրաժեշտ օրենսդրականան ակտերի կամ դրանց փոփոխությունների նախագծման միջոցով 46.2. Օրինախախտում թույլ տված անչափահասների անձնական	Անհատական տվյալների պաշտպանության ոլորտում առկա բացթողումների լրացում Օրենսդրական փոփոխությունների կատարում	2015թ. առաջին եռամսյակ 2014. վերջին եռամսյակ	ՀՀ ոստիկանություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն /համաձայնությամբ/ ՀՀ ոստիկանություն, ՀՀ արդարադատության նախարարություն,		

	տվյալների գաղտնիության ապահովում 46.3. Օրենքով սահմանել դատարանի հրապարակային դատական ակտերում երեխայի ինքնությունը բացահայտող տեղեկությունների գաղտնիության պահպանումը 46.4. Օրենքով արգելել լրատվության միջոցներին հրապարակելու հանցագործության կատարման մեջ մեղադրվող անչափահասի անձնական տվյալները, լուսանկարը, ինչպես նաև ցանկացած այլ տեղեկություն, որը կարող է բացահայտել երեխայի ինքնությունը 46.5. Լրատվամիջոցների ներկայացուցիչների համար անչափահասների քրեական արդարադատության լուսաբանման վերաբերյալ դասընթացների կազմակերպում և իրականացում	Օրենսդրական փոփոխություններ՝ միջազգային փորձի հիման վրա Իրազեկման դասընթացների կազմակերպում	2014թ. առաջին եռամսյակ 2014թ. երկրորդ եռամսյակ 2013թ. վերջին եռամսյակ	ՀՀ գլխավոր դատախազություն /համաձայնությամբ/ ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ԱՆ «Իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ		
47.	47.1. 1981թ. Անհատական տվյալների ավտոմատացված մշակման առնչությամբ անձանց պաշտպանության Եվրոպայի խորհրդի կոնվենցիայից բխող պարտավորությունների կատարում	Կոնվենցիային համապատասխան անհրաժեշտ միջոցառումների իրականացում	2014թ. առաջին եռամսյակ	ՀՀ ոստիկանություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն /համաձայնությամբ/		
IX. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ						
48.	48.1. Ընտրական գործընթացների իրավական ու կառուցակարգային երաշխիքների ամրապնդման համար	Ընտրական օրենսդրության շարունակական բարեփոխումներ	2014թ. երկրորդ եռամսյակ	ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով		

	անհրաժեշտ օրենսդրական նախաձեռնություններ			/համաձայնությամբ/, ՀՀ արդարադատության նախարարություն		
X. ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ						
49.	49.1. Հավաքների ազատության իրավունքի իրականացման նպատակով օրենքներում և կանոնակարգերում կատարված փոփոխությունների վերաբերյալ իրավապահ մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների՝ սահմանված կարգով շարունակական վերապատրաստում՝ ուղղված պրակտիկայում կամայական խոչընդոտների ծագման կանխմանը	Օրենքի խախտումների կանխմանն ուղղված վերապատրաստման դասընթացների ապահովում	2013-2014թթ. պարբերաբար	ՀՀ ոստիկանություն, ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն		
XI. ԱԶԱՏ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ						
50.	50.1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց համար ուսուցման և իրազեկման ապահովում՝ միջազգային չափանիշներին և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան	Տվյալ ոլորտի մասնագետների վերապատրաստման ծրագրեի իրականացում	2013-2014թթ. պարբերաբար	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն		
51.	51.1. Հեռուստատեսության և ռադիոյի կարգավորող մարմինների ընտրության և կազմավորման կարգի համապատասխանեցումը միջազգային և առաջին հերթին՝ եվրոպական պահանջներին	«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխությունների կատարում	2014թ. առաջին եռամսյակ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն		
52.	52.1. Արտահայտման ազատության և	Ոլորտի ապահովման համար	2013-	ՀՀ ոստիկանություն,		

	ազգային անվտանգության ապահովման չափանիշների միջև առկա սահմանազատման միջազգայնորեն ընդունված չափանիշների վերաբերյալ պետական ծառայողների և լրատվամիջոցների վերապատրաստման անցկացումը՝ հաշվի առնելով Յոհանեսբուրգյան սկզբունքներն ազգային անվտանգության, արտահայտման ազատության և տեղեկատվության մատչելիության վերաբերյալ	պատասխանատու մարմինների իրազեկության բարձրացում	2014թթ. պարբերաբար	ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն		
XII. ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԿԱՄ ԱՅԼ ԴԱԺԱՆ, ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՄ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՄ ՊԱՏԺԻ ՉԵՆԹԱՐԿՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ						
53.	53.1. «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ ԱԺ քննարկմանը 53.2. Օրենսդրորեն սահմանել խոշտանգուների ենթարկված անձի՝ փոխհատուցում ստանալու իրավունքը	Խոշտանգման սահմանման լիարժեք համապատասխանությունը Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ Կոնվենցիայի 1–ին և 4–րդ հոդվածներին, ինչպես նաև Կոնվենցիայի բոլոր դրույթներին համապատասխանեցում Օրենսդրական փոփոխություններ՝ միջազգային փորձի հիման վրա	2013թ. երրորդ եռամսյակ	ՀՀ արդարադատության նախարարություն		
54.	54.1. Ազատազրկման բոլոր վայրերում	Միջազգային փորձի	2014թ.	ՀՀ		

	խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացքն ապահովող անկախ համակարգի ստեղծում, որի հիմնական մանդատը կլինի խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող ցանկացած արարքի հետապնդումը և տվյալ արարքի ծանրությանը համաչափ պատժումը	ուսումնասիրում և դրա հիման վրա անհրաժեշտ օրենսդրական ակտերի մշակում և ընդունում	առաջին եռամսյակ	արդարադատության նախարարություն, ՀՀ ոստիկանություն, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)		
	54.2. Սահմանել հատուկ ընթացակարգեր՝ ցանկացած դեպքի առնչությամբ անկախ հետաքննություն իրականացնելու ուղղությամբ՝ անկախ այն հանգամանքից անձի կողմից պաշտոնական բողոք ներկայացվում է, թե ոչ	Մշտադիտարկումների իրականացում	2013թ. չորրորդ եռամսյակ	ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան /համաձայնությամբ/, ՀԿ-ներ		
	54.3. Իրականացնել պարբերական դիտարկումներ խոցելի խմբերի շրջանում՝ անազատության մեջ պահելու վայրերում, ոստիկանության համապատասխան բաժիններում, զինված ուժերում՝ խոշտանգումների դեպքերի հաշվառման և բացահայտման նպատակով, հավաքագրած տվյալների հիման վրա հետամուտ լինել կատարելու հետաքննություն՝ մեղավորներին ըստ արժանվույն պատասխանատվության ենթարկելու համար՝ անկախ այն		2013թ. չորրորդ եռամսյակ 2014թ. երկրորդ եռամսյակ			

	հանգամանքից պաշտոնական բողոք ներկայացվում է, թե ոչ 54.4. Ապահովել մեխանիզմներ անկախ դիտորդական խմբերի կողմից հարցաքննության վայրերում մշտադիտարկումներ իրականացնելու համար՝ խոշտանգումների դեպքերը բացահայտելու, կանխարգելելու նպատակով 54.5. Խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի վերաբերյալ իրավապահ մարմինների, զինծառայողների, բուժանձնակազմերի շրջանում (առհասարակ այն բոլոր անձանց, որոնք առնչվում են ազատազրկման վայրերի աշխատանքին, խոցելի խմբերին) պարբերական դասընթացների կազմակերպում՝ խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի, դրանց չափանիշների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման համար 54.6. Պարբերաբար վերանայել հարցաքննության կանոնները, հրահանգները, մեթոդները և կիրառությունը, ինչպես նաև ձերբակալված, կալանավորված և դատապարտված անձանց պահելու պայմանները և վերաբերմունքը նրանց նկատմամբ	Վերապատրաստման դասընթացներ իրավապահ մարմինների, զինծառայողների, բուժանձնակազմի աշխատակիցների համար Օրենսդրական փոփոխություններ		ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն		
55.	55.1. Կատարել համապատասխան	Չափորոշիչների մշակում՝	2013թ.	ՀՀ		

	օրենսդրական փոփոխություններ՝ բացառելու համար ժամկետային զինծառայողների ծառայությունը զինվորական դատախազությունում անցկացնելը	գործող օրենդրության հիման վրա անհրաժեշտության դեպքում օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ	երրորդ եռամսյակ	պաշտպանության նախարարություն		
56.	56.1. ՄԱԿ-ի յոթ հիմնական փաստաթղթերի՝ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ» կոնվենցիայի, «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման» մասին կոնվենցիայի, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրերի, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի և դրան կից երկու կամընտիր արձանագրությունների, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի դրույթների մասին իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև ՀՀ կողմից վավերացված հիմնական միջազգային իրավական ակտերի շուրջ սեմինար-դասընթացներ	Դատավորների, իրավապահ մարմինների, իրավաբանների շրջանում ՀՀ անդամակցությամբ գործող միջազգային պայմանագրերի իրազեկություն	պարբերաբար	ՀՀ արտաքին գործերի նախարարություն, շահագրգիռ այլ գերատեսչություններ		
XIII. ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ						
57.	57.1. Երեխաների իրավունքների	Երեխաների իրավունքների	2013թ.	ՀՀ աշխատանքի և		

	պաշտպանության ապահովման ինստիտուտների գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների կատարում	պաշտպանության ապահովման ինստիտուտների գործունեության արդյունավետության բարձրացում	երրորդ եռամսյակ	սոցիալական հարցերի նախարարություն, շահագրգիռ այլ գերատեսչություններ		
58.	58.1. Աշխատող երեխաների վերաբերյալ հետազոտության արդյունքների քննարկում և անհրաժեշտության դեպքում թրաֆիքինգի դեմ պայքարին առնչվող առաջարկությունների մշակում	Միջոցառումների իրականացում՝ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015թթ. ազգային ծրագրի «Հայաստանի Հանրապետությունում 2010-2012թթ. ընթացքում մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրի»	2013թ. երկրորդ եռամսյակ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն		
59.	59.1. Սահմանել բռնության զոհ դարձած երեխաների վերականգնմանն ու վերասոցիալիզացիային ուղղված գործողությունների իրականացման համար պատասխանատու մարմինների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը 59.2. Իրականացնել վերոգրյալ մարմինների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստումը՝ երեխաների	Բռնության զոհ դարձած երեխաների իրավունքների վերականգնում ու վերասոցիալիզացիա	2014 թ. առաջին եռամսյակ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն		

	շահերի լավագույն ապահովման նպատակով					
60.	60.1. Օրենսդրորեն սահմանել բռնության զոհ դարձած երեխաների, այդ թվում ֆիզիկական, հոգեկան և սեռական վերկանգնմանն ու վերասոցիալիզացիային ուղղված գործողությունների հստակ համալիր՝ միջազգային փորձի հիման վրա	Մասնագիտական վերապատրաստման դասընթացներ	2013թ. չորրորդ եռամսյակ	ՀՀ արդարադատության նախարարություն, Միջազգային կազմակերպությունների/համաձայնությամբ/		
61.	61.1. Օրենսդրորեն սահմանել ընտանեկան բռնության զոհ դարձած երեխաներին ընտանիքից անջատելու գործուն ընթացակարգեր, որոնք ուղղված կլինեն երեխաների իրավունքների լավագույն պաշտպանությանը	Միջազգային փորձի ուսումնասիրություն և օրենսդրական փոփոխությունների կատարման նպատակահարմարության քննարկում Օրենսդրական փոփոխություններ	2013թ. չորրորդ եռամսյակ	ՀՀ արդարադատության նախարարություն		
62.	62.1. Օրենսդրորեն սահմանել ընտանեկան բռնության զոհ դարձած և ընտանիքից անջատված երեխայի խնամքի ապահովման մարմինների պարտականությունները և պատասխանատվությունը	Օրենսդրական փոփոխություններ	2014թ. առաջին եռամսյակ	ՀՀ արդարադատության նախարարություն		
63.	63.1. Երեխաների խնամքի կենտրոններում վատ վերաբերմունքի մշտադիտարկման իրականացում և երեխաների խնամքի կենտրոններում բռնության ենթարկված երեխաներին միջավայրից հեռացնելու ընթացակարգերի օրենսդրական	Մշտադիտարկումներ/օրենսդրական փոփոխությունների կատարման անհրաժեշտության քննարկում	2013թ. չորրորդ եռամսյակ	ՀՀ արդարադատության նախարարություն		

	սահմանում՝ երաշխավորելով վերջինների վրա ստրեսոգեն ազդակների ազդեցությունը, ինչպես նաև օրենսդրորեն սահմանել երեխաների խնամքի կենտրոններից հեռացված երեխաներին պահելու վայրերի և պատասխանատու մարմինների պարտականությունները և պատասխանատվությունը					
64.	64.1. Երեխաների շրջանում իրականացնել բռնության բոլոր ձևերի մասին իրազեկվածության բարձրացում, ինչպես նաև հանրակրթական դպրոցներում, երեխաների խնամքի կենտրոններում երեխաների հետ իրականացնել զրույցներ՝ իրենց նկատմամբ հնարավոր բռնության դեպքերը բացահայտելու ուղղությամբ՝ ներառյալ ֆիզիկական, հոգեբանական, սեռական բռնությունն ինչպես ընտանիքում, այնպես էլ ուսման վայրում և փողոցում	Իրազեկմանն ուղղված ծրագրերի իրականացում, հոգեբանական աջակցության տրամադրման կազմակերպում	2014թ. առաջին եռամսյակ	ՀՀ մարդու իրավունքների պաշտպան /համաձայնությամբ/, ՀԿ-ներ		
65.	65.1. Քրեական օրենսդրությամբ սահմանել առավել խիստ պատասխանատվություն երեխաների նկատմամբ բռնության, հատկապես երեխաների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների համար	Օրենսդրական փոփոխություններ	2013թ. վերջին եռամսյակ	ՀՀ արդարադատության նախարարություն		
XIV. ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ						
66.	66.1. «Ընտանեկան բռնության դեմ	«Ընտանեկան բռնության դեմ	2014թ.	ՀՀ ոստիկանություն		

	պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում՝ միջազգային չափանիշներին համապատասխան	պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունում	չորրորդ եռամսյակ			
67.	67.1. Գենդերային հավասարության հարցերով հատուկ մեխանիզմի ստեղծմանն ուղղված օրենսդրական և այլ միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան լուծելու կանանց իրավունքներին և գենդերային հավասարությանն առնչվող խնդիրները	Գենդերային հավասարության հարցերով հատուկ մեխանիզմի ստեղծում	2013թ. չորրորդ եռամսյակ	ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն		
68.	68.1. Իրավահավասարության ապահովմանն ուղղված քայլերի ամրապնդում և գենդերային բռնության բացառում	Հավասար իրավունքների և հնարավորությունների մասին օրենքի և գենդերային բռնության մասին օրենքի ընդունում	2014թ. երկրորդ եռամսյակ	ՀՀ արդարադատության նախարարություն		
69.	69.1. Սեռի հատկանիշով բռնության դեմ պայքարի ուժեղացմանն ուղղված միջոցառումների իրականացում 69.2. Գենդերային բռնության զոհերին տրամադրվող սոցիալական և իրավական աջակցության և ծառայությունների տրամադրման ապահովում	Գենդերային իրավիճակի շարժընթացի գնահատման և մշտադիտարկման ցուցանիշների ներդրմանն ուղղված ուսուցողական դասընթացներ: Կստեղծվեն բռնության զոհերի համար ժամանակավոր կացարաններ և/կամ ապաստարաններ	2015թ. առաջին եռամսյակ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ ոստիկանություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		
70.	70.1. Մշակել և ներդնել մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ ենթարկված անձանց մատուցվող անհրաժեշտ ծառայությունների նվազագույն չափորոշիչներ	Աշխատող երեխաների իրավունքների պաշտպանություն. մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ ենթարկված	2014թ. երկրորդ եռամսյակ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ		

	70.2. Բռնության, այդ թվում՝ սեռական բռնության, ենթարկված անձանց բուժօգնության որակի բարելավում	անձանց աջակցության գործընթացի առավել արդյունավետ և մասնագիտական բարձր որակով իրականացում		առողջապահության նախարարություն, ՀՀ ոստիկանություն, ՀՀ պաշտպանության նախարարություն		
71.	Բռնության կանխարգելումն ուժեղացնելու, ինչպես նաև ընտանեկան բռնությունը կանխելուն ուղղված գործնական քայլերի նախաձեռնում	Ստորագրել և վավերացնել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիան	2014թ. առաջին եռամսյակ	ՀՀ ԱԳՆ		
XV. ՏԱՐԵՑ ՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ						
72.	72.1. Անօթևան տարեցների սոցիալական աջակցության ծրագրերի մշակում 72.2. Տուն-ինտերնատ քաղաքացիների ընդունելության կարգի հստակեցում 72.3. Հոգեկան խանգարումով տառապող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման Հայեցակարգի նախագծի մշակում և ՀՀ կառավարություն ներկայացում	Տարեցներին որակյալ սոցիալական ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընձեռնմանն ուղղված ենթաօրենսդրական ակտերի ընդունում, հոգեկան խանգարումներով անձանց համար այլընտրանքային ծառայությունների ներդրում	2013թ. չորրորդ եռամսյակ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն		ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ
XVI. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ						
73.	73.1. ՀՀ օրենսդրության վերլուծություն՝ ուղղված դրանց համապատասխանեցմանը միջազգային չափորոշիչներին, հատկապես՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման ուղղությամբ օրենսդրական բարեփոխումներ	2013-2016թթ.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն		ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ

	դրույթների պահանջներին					
74.	74.1. Հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքները բավարարող հատուկ դասավանդման մեթոդաբանության ընդունումը, ինչպես նաև համապատասխան հայեցակարգի մշակումը՝ հաշմանդամություն ունեցող երեխաների մասնագիտական պատրաստվածության ծրագրերի ապահովման վերաբերյալ 74.2. Կրթական հաստատություններում ուսուցչի օգնականի, ընթերցողի, ուղեկցողի, հատուկ կարիքներ ունեցող անձանց համար ժեստերի լեզվի թարգմանչի ծառայությունների մատուցման իրականացումը, ինչպես նաև ուսուցման գործընթացում հատուկ կարիքներ ունեցող անձանց համապատասխան սարքավորումներով ապահովումը 74.3. Ներառական կրթական համակարգի ստեղծումը, ներառյալ՝ հիմնական և մասնագիտացված կրթության տրամադրումը, որը կնպաստի փորձի փոխանակմանն ու հաշմանդամություն ունեցող երեխաների, երիտասարդների, մեծահասակների ներգրավմանը հասարակական կյանքին	Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի իրացման հնարավորությունների զարգացում և ընդլայնում	2016թ. առաջին եռամսյակ	ՀՀ կրթության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն		
75.	75.1. Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման		2013-2016թթ.	ՀՀ աշխատանքի և սոցիալական		ՀՀ պետական բյուջե

	գործընթացի արդյունավետության բարձրացում 75.2. Ֆինանսական և համապատասխան այլ միջոցների ավելացում հաշմանդամություն ունեցող անձանց պրոթեզա-օրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով, այդ թվում՝ սայլակներով և լսողական սարքերով, ապահովման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար 75.3. Հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կյանքին ինտեգրելուն ուղղված արդյունավետ միջոցառումների նախատեսում	Հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի բարելավմանն ուղղված սոցիալական ծրագրերի մշակում		հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն		դոնոր կազմակերպություններ
76.	76.1. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության, դրանց հիմնախնդիրների լուսաբանում, գրքույկների, մեթոդական ուղեցույցների տպագրում, հեռուստահաղորդումների կազմակերպում	Համապատասխան միջոցառումների, հատկապես՝ հանրային քննարկումների, կլոր սեղանների կազմակերպում և իրականացում	2013թ. երկրորդ-երրորդ եռամսյակներ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, Հանրային հեռուստաընկերություն/ Հանրային ռադիո (համաձայնությամբ)		ՀՀ պետական բյուջե դոնոր կազմակերպություններ
77.	77.1. Հոգեկան առողջության հետ կապված շեղումներ ունեցողների իրավունքների արդյունավետ պաշտպանություն	Հոգեկան առողջության խնդիրների իրավակարգավորմանն ուղղված օրենսդրության մեջ փոփոխությունների	2014թ. երկրորդ եռամսյակ	ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ արդարադատության		

		կատարման անհրաժեշտության վերանայում՝ հիմնված միջազգային փորձի հիման վրա		նախարարություն		
78.	78.1. Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ բժշկասոցիալական փորձաքննության իրականացման ոլորտում իրավասու մարմինների կողմից գնահատողական հայեցողության հնարավորինս կրճատման, հաշմանդամության որոշման չափորոշիչների առավելագույն հստակեցման, ԲՍՓՀ-ների գործունեության թափանցիկության ապահովման ուղղությամբ	Ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ	2013-2016թթ.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն		
79.	79.1. Հաշմանդամություն ունեցող անձանց առողջության վերականգնման ծառայությունների կազմակերպում և ծառայությունների մատչելիության ապահովում, ներառյալ սեռական և վերարտադրողական առողջությունը	Օրենսդրական փոփոխություններ	2014թ. վերջին եռամսյակ	ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն		
XVII. ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԷԹՆԻԿ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ						
80.	80.1. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ծննդյան վկայականներում անձի իքնությանը վերաբերող նշումները կատարելիս համաձայնեցված մեթոդաբանության մշակմանն ուղղված միջոցառումների իրականացում	Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ծննդյան վկայականներում անձի իքնությանը վերաբերող նշումների կատարման ընդհանուր մեթոդաբանություն	2014թ. առաջին եռամսյակ	ՀՀ արդարադատության նախարարություն		
81.	81.1. Ուսուցիչների պատրաստման և հանրապետությունում բնակվող	Ազգային փոքրամասնությունների	2014թ. երրորդ	ՀՀ կառավարության աշխատակազմի		

	ազգային փոքրամասնությունների լեզուներով թարմացված ուսումնական նյութերի ապահովմանն ուղղված համակարգված քաղաքականության մշակում	լեզվի պահպանմանն ուղղված միջոցառումների զարգացում	եռամսյակ	կրոնի և ազգային փոքրամասնությունների հարցերով վարչություն		
82.	82.1. Որոշումներ կայացնողների մակարդակում ազգային և էթնիկ փոքրամասնությունների ներկայության քվոտաների ներդրմանն ուղղված անհրաժեշտ միջոցների ձեռնարկում	Որոշումներ կայացնողների մակարդակում ազգային և էթնիկ փոքրամասնությունների ներկայության քվոտաների ներդրում	2015թ. երկրորդ եռամսյակ	ՀՀ կառավարության աշխատակազմի կրոնի և ազգային փոքրամասնությունների հարցերով վարչություն		
83.	83.1. Ազգային և էթնիկ փոքրամասնություններով բնակեցված մարզերում և համայնքներում մշակութային կենտրոնների կառուցման և ազգային լեզուներով ռադիոհեռուստահաղորդումների հեռարձակման ապահովման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացում	Ազգային և էթնիկ փոքրամասնություններով բնակեցված մարզերում և համայնքներում մշակութային կենտրոնների կառուցում ու ազգային լեզուներով ռադիոհեռուստահաղորդումների հեռարձակման ապահովում	2016թ. առաջին եռամսյակ	ՀՀ կառավարության աշխատակազմի կրոնի և ազգային փոքրամասնությունների հարցերով վարչություն		
XVIII. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ						
84.	84.1. Փախստականների և ապաստանի վերաբերյալ ՀՀ իրավական ակտերում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտերի նախագծերի մշակում 84.2. Ապաստան հայցողների և փախստականների իրավունքների ապահովման վերաբերյալ ազգային օրենսդրության ներդաշնակեցում միջազգային պահանջներին, մասնավորապես, ԵՄ չափորոշիչներին	Փախստականների և ապաստանի վերաբերյալ ՀՀ իրավական ակտերում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտերի ընդունում	2014թ. մայիս	ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն		ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջվում

85.	85.1. Փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց սոցիալական (ընտանեկան) և տնտեսական ինտեգրմանը նպաստող ծրագրերի մշակումը և իրականացումը, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն	Փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց սոցիալական և տնտեսական ինտեգրմանը նպաստող ծրագրերի մշակում և իրականացում	2014թ.-ի դեկտեմբեր	ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ առողջապահության նախարարություններ		ՀՀ պետական բյուջե և ֆինանսավորման այլ աղբյուրներ
86.	86.1. Քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների պաշտպանություն	Ընթացակարգերի նախատեսում և ճամփորդական փաստաթղթերի տրամադրում՝ 1954թ. Կոնվենցիայի և այլ կարգերի համաձայն	2013թ. չորրորդ եռամսյակ	ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն		
87.	87.1. Փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց ՀՀ-ում լիարժեք ինտեգրման համար նպաստավոր պայմանների ստեղծում	Շարունակական ծրագիր	2013–2015թթ.	ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն		
88.	88.1. Ապաստանի հետ կապված ոլորտը կարգավորող օրենսդրության վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ապահովում	Ապաստան հայցողներին նման տեղեկատվության ապահովում երկիր մուտք գործելիս /Զվարթնոց	2013թ. չորրորդ եռամսյակ	ՀՀ արդարադատության նախարարություն		

	ապաստան հայցողներին: Ապաստան հայցողների աշխատանքային հավասար իրավունքների տրամադրում, ինչպես նաև անվճար իրավաբանական օգնության տրամադրում	օդանավակայան/ Օրենսդրական փոփոխություններ				
89.	89.1. Միգրանտների ընտանիքների իրավունքների պաշտպանության երաշխիքների ուժեղացում	Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիայի ստորագրում և վավերացում	2014թ. երկրորդ եռամսյակ	ՀՀ ԱԳՆ		
		XIX. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ				
90.	90.1. Վերանայել և բարելավել հսկողությունը մշակութային արժեքների, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության բնագավառում 90.2. Ձեռնարկել միջոցներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մշակութային կազմակերպությունների մատչելիության ապահովման ուղղությամբ 90.3. Գործողություններ ձեռնարկել ոլորտի օրենսդրությունը բարելավելու, գործող օրենսդրությամբ ամրագրված դրույթների իրագործման մեխանիզմներ ստեղծելու ուղղությամբ	Մարդու մշակութային իրավունքների իրականացմանը և պաշտպանությանն առնչվող ծրագրերի իրականացում	2013թ. ընթացքում	ՀՀ մշակույթի նախարարություն		
91.	91.1. Բարձրացնել մշակույթի	Նախարարության կայքում	2013թ.	ՀՀ մշակույթի		

	նախարարության գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը, ապահովել Նախարարության տարեկան հաշվետվությունների հրապարակայնությունը	տեղադրել նախարարության տարեկան հաշվետվությունը	երկրորդ եռամսյակ	նախարարություն		
92.	92.1. Թանգարանների և գրադարանների հավաքածուների պահպանման, համալրման և հանրայնացման ծրագրերի մշակում 92.2. Մշակութային ժառանգության թվանշայնացում, տեղեկատվական շտեմարանների ստեղծում 92.3. Ստեղծագործական զանգվածային նպատակային ծրագրերի մշակում	Մշակութային իրավունքներին ուղղված բարեփոխումների իրականացում	2013թ. ընթացքում	ՀՀ մշակույթի նախարարություն		
93.	93.1. Հասարակության անապահով և խոցելի խմբերի համար վճարովի մշակութային ծառայություններից օգտվելու զեղչերի համակարգի ներդրում 93.2. Միջմարզային մշակութային փոխադարձ ճանաչողության ապահովման ծրագրերի մշակում և իրականացում	Ենթաօրենսդրական ակտերի ընդունում	2013թ.	ՀՀ մշակույթի նախարարություն		
94.	94.1. Հայ ժողովրդի հոգևոր-մշակութային ինքնության և բարոյական արժեքներին սպառնացող երևույթների կանխարգելմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում	Հայապահպան ծրագրերի մշակում	2013թ. հուլիս–2014թ. հունվար	ՀՀ մշակույթի նախարարություն		
95.	95.1. Ավանդական ժողովրդական արհեստագործության զարգացման	Ավանդական ժողովրդական արհեստագործության	2013թ. երրորդ	ՀՀ մշակույթի նախարարություն		

	ծրագրի մշակում և իրականացում	զարգացման ծրագրի իրականացում	եռամսյակ			
96.	96.1. Մշակույթի տարբեր ոլորտներում քաղաքականության իրականացման աշխատանքներին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկում և մասնակցություն	Ազգային փոքրամասնությունների մշակութային իրավունքների արդյունավետ պաշտպանությանն ուղղված օրենսդրության փոփոխություն	2013թ. երրորդ եռամսյակ	ՀՀ մշակույթի նախարարություն		
97.	97.1. Ազգությամբ հայ փախստականների սոցիալական և կրթամշակութային ինտեգրման աջակցման ծրագրի մշակում	Սոցիալական և կրթամշակութային ինտեգրման ծրագրի ընդունում	2013թ. երրորդ եռամսյակ	ՀՀ սփյուռքի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարությանն առընթեր միգրացիոն գործակալություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ առողջապահության, ՀՀ մշակույթի նախարարություններ		
XX. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ						
98.	98.1. Ձեռնարկել գործուն միջոցներ ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու ընթացակարգի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված	Բնապահպանական ոլորտը կանոնակարգող օրենսդրության պատշաճ կատարմանն ուղղված միջոցառումների կատարում	2013թ.	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն		

	պահանջների խախտումների կանխարգելման և բացառման ուղղությամբ					
99.	99.1. Բարձրացնել ընդերքի օգտագործման և պահպանման բնագավառում օրենքների և իրավական այլ ակտերի ընդունման գործընթացի թափանցիկությունն ու հրապարակայնությունը	Հանրային քննարկումների իրականացում	շարունակական	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն		
100.	100.1. Ուժեղացնել վերահսկողությունն ընդերք օգտագործող կազմակերպությունների կողմից օրենքներով, իրավական այլ ակտերով և պայմանագրերով սահմանված պարտավորությունների կատարման նկատմամբ	Մոնիտորինգային գործընթացների ուժեղացում՝ ըստ «Բնապահպանության վերահսկողության մասին» ՀՀ օրենքի	2013թ. չորրորդ եռամսյակ	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն		
101.	101.1. Հետևողական քայլեր ձեռնարկել էլեկտրաէներգիայի օգտագործման անվտանգության ապահովման, քաղաքացիների կյանքի, գույքի և շրջակա միջավայրի՝ տեխնիկական կանոնակարգերով և իրավական այլ ակտերով սահմանված նորմերի պահպանման, ինչպես նաև մատակարարի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովման ուղղությամբ	Էլեկտրաէներգիայի օգտագործման անվտանգությանն ուղղված օրենսդրության վերանայում	2014թ. առաջին եռամսյակ	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն		
102.	102.1. Շրջակա միջավայրի պահպանության հարցերով հասարակական կազմակերպությունների վարչական-դատավարական	Օրենսդրական բարեփոխումների չափանիշների վերաբերյալ առաջարկությունների մշակում	2013թ. երկրորդ եռամսյակ	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ բնապահպանության		Դոնոր կազմակերպություններ

	իրավասուբյեկտության հիմնախնդրի վերաբերյալ ազգային աշխատանքային հանդիպում			նախարարություն/ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոն		
103.	103.1. ՀՀ շրջակա միջավայրի պահպանության ոլորտի միջազգային պայմանագրերի իմպլեմենտացիա յի վիճակի վերաբերյալ գիտագործնական հետազոտության իրականացման հայեցակարգի նախապատրաստում	ՀՀ շրջակա միջավայրի պահպանության ոլորտի միջազգային պայմանագրերի իրացման վիճակի վերաբերյալ հիմնախնդիրների և լուծման հնարավոր ուղիների որոշակիացում հետազոտության հայեցակարգի շրջանակում	2013թ. երրորդ եռամսյակ	ՀՀ բնապահպանության նախարարություն/ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոն		ՀՀ պետական բյուջե
		XXI. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ				
104.	104.1. Իրականացնել մենաշնորհային և գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեության նկատմամբ հսկողություն և չարաշահումների կանխարգելում	Մենաշնորհային օրենսդրության վերանայում, անհրաժեշտ փոփոխությունների կատարում	2013թ. չորրորդ եռամսյակ	Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով /համաձայնությամբ/		
105.	105.1. Միջոցներ ձեռնարկել տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի գնային քաղաքականության շարժերի նկատմամբ վերահսկողության օրենսդրությամբ սահմանված մեխանիզմների շրջանակի	Տնտեսական մրցակցության մասին օրենսդրության վերանայում, անհրաժեշտ փոփոխությունների կատարում	2013թ. չորրորդ եռամսյակ	Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով /համաձայնությամբ/		

	ընդլայնման ուղղությամբ					
106.	106.1. Վերացնել շուկա մուտք գործելու խոչընդոտներն ինչպես ներքին արտադրողների, այնպես էլ ներմուծողների համար՝ ապահովելով հավասար մրցակցային պայմաններ բոլորի համար: Հայտնաբերել և կանխարգելել անբարեխիղճ տնտեսվարողների կողմից սպառողների շահերը վնասելու փորձը	Օրենսդրական փոփոխություններ	2013թ. չորրորդ եռամսյակ	Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով /համաձայնությամբ/		
107.	107.1. Մշակել տնտեսական մրցակցությանն առնչվող հարցերի վերաբերյալ հանրության իրազեկության բարձրացման ծրագրեր	Իրազեկության բարձրացման ծրագրերի կատարում	2013թ. չորրորդ եռամսյակ	Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով /համաձայնությամբ/		
XXII. ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ						
108.	108.1. Անչափահաս վկաների և տուժողների հարցաքննության համար հատուկ նախատեսված սենյակների ստեղծում	Օրենսդրական փոփոխություններ	2013թ. չորրորդ եռամսյակ	ՀՀ ոստիկանություն		ՀՀ պետական բյուջե
109.	109.1. Անչափահասների գործերով քրեական արդարադատության համապատասխանեցումը միջազգային նորմերին և չափանիշներին	Միջազգային փորձի ուսումնասիրություն և նպատակահարմարության քննարկում	2013թ. երրորդ եռամսյակ	ՀՀ արդարադատության նախարարություն		
110.	110.1. Քրեական օրենսգրքով նախատեսել անչափահասների համար քրեական պատասխանատվության փոխարինում արտադատական,	Օրենսդրական փոփոխությունների կատարում, այդ թվում նոր քրեական օրենսգրքի ընդունում	2014թ.	ՀՀ արդարադատության նախարարություն		

	այլընտրանքային միջոցներով: Դրանք են՝ խնամքը, նախազգուշացումները, խնամակալությունը, պրոբացիան, խորհրդատվությունը, դաստիարակչական վերապատրաստման ծրագրերի իրականացումը, հատուկ հաստատություններում տեղավորելը					
111.	111.1. Իրականացնել անչափահասների գործեր քննող քննիչների, դատախազների և դատավորների, ինչպես նաև անչափահասների պաշտպանությունն իրականացնող փաստաբանների պարբերական վերապատրաստում՝ անչափահասների ներգրավմամբ գործերի քննության ընթացքում նրանց առանձնահատկությունները հաշվի առնելով	Վերապատրաստման դասընթացների կազմակերպում	2013թ. երրորդ եռամսյակ	ՀՀ փաստաբանների պալատ		
112.	112.1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով հնարավորինս սպառիչ սահմանել դատական նիստի հետաձգման հիմքերը Փոփոխություններ կատարելու նպատակն է՝ բացառել նիստի հետաձգումը դրա համար չնախատեսված որևէ հիմքով, մշակել դատական նիստերի չարդարացված հետաձգումների կանխարգելման ընթացակարգեր՝ միջազգային փորձին համապատասխան՝ նկատի ունենալով, որ դատական նիստերի	«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունում	2013թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն		ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջվում

	չարդարացված հետաձգումները կարող են հանգեցնել ողջամիտ ժամկետում արդար դատաքննության իրավունքի խախտմանը					
113.	113.1. ՀՀ դատական օրենսգրքում դատավարական կամ նյութական սխալի ակնհայտ և կոպիտ լինելու չափանիշների սահմանմանն ուղղված վերլուծությունների կատարում 113.2. Արդարադատության խորհուրդ դիմելու ժամկետների վերանայում	Օրենսդրական փոփոխության անհրաժեշտության վերհանում	2013թ. երրորդ եռամսյակ	ՀՀ արդարադատության նախարարություն		
XXIII. ԱՆՁՆԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ						
114.	114.1. Անչափահաս օրինախախտների նկատմամբ կալանավորումը՝ որպես խափանման միջոց կիրառելու պրակտիկայի բացառում	Քրեադատավարական պրակտիկայի վերանայում, անհրաժեշտության դեպքում օրենսդրական փոփոխությունների կատարում	2013թ.չորրորդ եռամսյակ	ՀՀ Գլխավոր դատախազություն		
115.	115.1. Քրեական դատավարություն օրենսգրքով անչափահաս մեղադրյալների նկատմամբ կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառման առավել խիստ պայմաններ նախատեսել	Միջազգային փորձի ուսումնասիրություն/օրենսդրական փոփոխություններ	2013թ. վերջ	ՀՀ Գլխավոր դատախազություն		
XXIV. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ						
116.	116.1. Մշակել նոտարական գրասենյակներում և ՔԿԱԳ տարածքային բաժիններում պարբերաբար դիտարկումներ անցկացնելու կարգ	Ենթաօրենսդրական ակտերի ընդունում	2014թ. առաջին եռամսյակ	ՀՀ արդարադատության նախարարություն		
117.	117.1. Նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման	Նոտարական գործողությունների	2014թ. առաջին	ՀՀ արդարադատության		

	համակարգի ներդրում	կատարման համար մի շարք փաստաթղթերի կամ տեղեկատվության ստանալը անձանց առցանց եղանակով, հանրային ծառայությունների մատուցման «մեկ պատուհանի կանգառ» ներդրում	եռամսյակ	նախարարություն		
118.	118.1. ՔԿԱԳ գործողությունների կատարման համար մի շարք փաստաթղթերի կամ տեղեկատվության ստանալը առցանց եղանակով, ինչպես նաև մեկ պատուհանի սկզբունքով քաղաքացիներին ծառայությունների մատուցման հեշտացումը 118.2. Ծառայությունների մատուցման ժամկետների կրճատում և ՔԿԱԳ գրանցումների կատարման համար տարածքային սահմանափակումների վերացում	ՔԿԱԳ օրենքի նախագծի մշակում/էլեկտրոնային ՔԿԱԳ համակարգի ներդրում	2014թ. երկրորդ եռամսյակ	ՀՀ արդարադատության նախարարություն		
119.	119.1. Հանրային ռեգիստրների վարման /գրանցման/ միասնական սպասարկման կենտրոնների ներդրում	Սպասարկման անձնակազմի պարբերաբար դասընթացների կազմակերպում	2013թ. վերջին եռամսյակ	ՀՀ արդարադատության նախարարություն		